- «Ձայն»
  **վերլուծական տեղեկատվական լրատու**
  նպատակ ունի բարձրացնել Հայաստանում սոցիալ-տնտեսական զարգացումների շուրջ հասարակության իրազեկության աստիճանը,
- **լուսաբանել**
  իրականացվող հանրային քաղաքականությունները և հիմքեր ստեղծել դրանց հասարակական մոնիտորինգի և մասնակցության համար:
- **Ձայնը հրատարակվում է «Օքսֆամ»**
  բրիտանական կազմակերպության Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի բյուջետային վերլուծությունների» ծրագրի շրջանակներում:
- **Ծրագիրը իրականացնում է Տնտեսական զարգացման հետազոտությունների կենտրոն**
  ոչ-առևտրային, ոչ-քաղաքական կազմակերպությունը:




# Ձայն


♦ ՀԱՄԱՐ 7 ♦ ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2004

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ


## ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Արմենթել - ՀՀ Կառավարություն

Երկարատև բանակցություններից հետո իր հանգուցալուծումը ստացավ Արմենտել-ՀՀ կառավարություն վեճը, որը հասել էր Լոնդոնի արբիտրաժային դատարան: Ըստ էության, մտահոգվելով Լոնդոնի դատարանի կողմից ի վնաս Հայաստանի որոշում կայացնելուց, Հայաստանի կառավարությունը համաձայնության գնաց Արմենտելի հետ՝ հետ կանգնելով իր պահանջների մեծ մասից: Ձեռք բերված ներ համաձայնության հիմնական կետերը կայանում են հետևյալում. Արմենտելի կողմից մինչ այժմ չկատարված ներդրումային պարտավորությունները ներվում են կառավարության կողմից, հեռահաղորդակցության ոլորտում Արմենտելի մոնոպոլ իրավունքների ժամկետը կրճատվում է և այն վերջանում է ոչ թե 2013 թվականին, այլ ավելի շուտ՝ 2009 թվականին, Արմենտելը համաձայնվում է շուկա թողնել բջջային կապի նոր օպերատոր Ղարաբաղ-Տելեկոմին, որի դիմաց կառավարությունն ընդունում է, որ ինտերնետ հեռախոսակապի ծառայությունները ևս հանդիսանում են Արմենտելի մոնոպոլիան և խոստանում է արգելել մանր կազմակերպություններին մատուցել ինտերնետ հեռախոսակապի ծառայությունները: Քանի որ այս համաձայնությամբ Արմենտելը ոչինչ չի կորցնում, ապա դա հակասում է մեր կառավարության կողմից վերջին տարիներին արվող այն պնդումներին, որ Արմենտելը մեծ վնասներ է հասցրել Հայաստանին և պետք է պատժվի:

### Հազարամյակի մարտահրավերներ

Ինչպես հայտնի է ԱՄՆ կառավարության կողմից Հայաստանին իրավունք էր շնորհվել աննախադեպ խոշոր դրամաշնորհներ ստանալու հա-

Շար. հաջորդ էջում

# Ի՞նչու Հայաստանում չի նվազում գյուղական աղքատությունը

## Աղքատության վերջին ցուցանիշները

Սկսած 1996 թվականից Հայաստանում անցկացվում է Տնային Տնտեսությունների (ընտանիքների) ուսումնասիրություն, որը նպատակ ունի բացահայտելու աղքատության մակարդակը: Վերջերս ամփոփվեցին 2003 թվականի ուսումնասիրության արդյունքները, որոնք չնայած որոշակի առաջընթաց են գրանցել, բայց միևնույն ժամանակ մտահոգությունների տեղիք են տալիս: Խնդիրը կայանում է նրանում, որ, եթե 1996-2003 թվականների ընթացքում Հայաստանում աղքատությունը 55 տոկոսից նվազել է և հասել 43 տոկոսի, ապա գյուղական աղքատության բարելավում այս վերջին 8 տարիների ընթացքում ընդհանրապես տեղի չի ունեցել և այն մնացել է միևնույն 48 տոկոս մակարդակի վրա: Գծապատկերում ցույց է տրված գյուղ/քաղաք աղքատության ցուցանիշների համեմատությունը 1996–2003 թվականների համար:

Աղքատությունը քաղաքային և գյուղական բնակավայրերում




## Երևան և մնացյալ Հայաստան. երկու տարբեր երկրներ

Ինչպես երևում է գծապատկերից, Հայաստանում քաղաքային աղքատության նվազումը հիմնականում պայմանավորված է Երևան քաղաքում իրավիճակի բարելավմամբ: Հետաքրքիր է նկատել, որ եթե 1996 թվականին Երևանի բնակչության մոտ 60 տոկոսը համարվել է աղքատ, ապա 2003 թվականին աղքատ է համարվել բնակչության ընդամենը 30 տոկոսը, այսինքն աղքատությունը Երևանում կրճատվել է 2 անգամ: Եթե ամբողջ Հայաստանում գրանցվեր նույն արդյունքը, ապա Հայաստանում աղքատությունն այսօր պետք է լիներ ոչ թե 43 տոկոս, այլ ընդամենը 27 տոկոս: Իհարկե, բոլոր երկրների մայրաքաղաքներն էլ ավելի արագ են աճում, քան այդ երկրի գյուղական վայրերը կամ փոքր քաղաքները, բայց Հայաստանի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ գյուղական աղքատությունը ոչ թե ավելի դանդաղ է նվազել, այլ ընդհանրապես չի նվազել, իսկ որոշ փոքր քաղաքներում և գյուղերում այն նույնիսկ աճել է համեմատած 1996 թվականի դեռևս «ցուրտ» և «մութ» տարիների հետ: Այնպիսի տպավորություն է, թե մենք խոսում ենք երկու տարբեր երկրների մասին:

## Ինչ է տեղի ունեցել գյուղական եկամուտների հետ

Ինչպես ցույց են տալիս վերջին հետազոտությունների արդյունքները, 1999-2003 թվականների ընթացքում գյուղում բնակվող միջին ընտանիքի եկամուտները աճել են գրեթե այնքան, ինչքան որ գների սղաճը, այսինքն, իրական իմաստով եկամուտների աճ գյուղում չի արձանագրվել: Իսկ եթե դիտարկենք քաղաքային բնակչության եկամուտները, ապա այդ նույն ժամանակահատվածում դրանք աճել են մոտ երկու անգամ: Առանձին կուսումնասիրենք գյուղական եկամուտների տարբեր աղբյուրները, որոնք են գյուղատնտեսական մթերքներից ստացվող եկամուտները, վարձու աշխատանքը, սեփական բիզնեսը և պետական տարբեր նպաստները:

## Ի՞նչ է տեղի ունեցել գյուղմթերքների վաճառքից ստացվող եկամուտների հետ

Սկսենք գյուղական եկամուտների ամենակարևոր մասից՝ գյուղատնտեսական մթերքների վաճառքից ստացվող եկամուտներից: Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի բոլոր մարզերում այս վերջին տարիներին գյուղատնտեսական մթերքների արտադրությունն աճել է՝ գյուղացիները դրանից զգալի օգուտներ չեն ստացել, քանի որ շուկայում իրենց արտադրանքի գներն ավելի դանդաղ են աճել, քան այլ ապրանքների գները, իսկ որոշ դեպքերում նույնիսկ նվազել են: Մյուս կողմից, Հայաստանում արդեն ձևավորվում են ֆերմերային տնտեսություններ, հատկապես անասնապահության և կարտոֆիլի արտադրության բնագավառում, որոնք ավելի արդյունավետ են կազմակերպում իրենց աշխատանքը և կարող են առաջարկել ավելի ցածր գներ, քան մանր գյուղացիական տնտեսությունները: Մյուս կողմից, գյուղերում ավելի արագ աճել են ոռոգման վարձը, պարարտանյութերի, թունաքիմիկատների գները, որոնք գրեթե զրոյի են հասցրել գյուղատնտեսական մթերքների արտադրության աճից գյուղացու ստացվելիք եկամուտները:

Ոչ պակաս կարևոր հանգամանք է նաև այն, որ արագորեն մեծանում է գյուղացու կողմից մեծածախ շուկայում վաճառվող և մանրածախ շուկայում վերավաճառվող մթերքների գների միջև տարբերությունը, որը պայմանավորված է նրանով, որ եթե նախկինում գյուղացին նաև վաճառողն էր, ապա հիմա արդեն ձևավորվել են առևտրային կայացած կառույցներ, և հիմա գյուղացու եկամուտը միայն արտադրությունից է գալիս, իսկ առևտրային գործունեությունից ստացվող եկամուտները գնում են մասնագիտացված առևտրային կառույցներին:

Այս ամենի արդյունքում գյուղացու սեփականություն հանդիսացող հողն արդեն չի խաղում այն կարևոր դերը, ինչպես եղել է 1990-ականների կեսերին: Շատ դեպքերում հողն արդեն բավական չէ որոշ չափով արժանապատիվ կյանք ապահովելու համար:

## Արդյո՞ք գյուղում ոչ-գյուղատնտեսական աշխատատեղեր են ստեղծվում

Եթե հող ունենալը և գյուղատնտեսությամբ զբաղվելը գյուղացու համար արժանապատիվ ապրելու համար

Շար. հաջորդ էջում

մար ծրագրեր ներկայացնել նախագահ Բուշի կողմից ստեղծված «Հազարամյակի Մարտահրավերներ» հիմնադրամին: ՀՀ կառավարությունը շատ մեծ հույսեր ուներ այս ծրագրի կապակցությամբ և մեր պատվիրակությունը ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանի գլխավորությամբ նոյեմբերի սկզբին մեկնել էր Վաշինգտոն, իր հետ տանելով մոտ 900 մլն դոլարի ծրագրերի ֆինանսավորման պահանջ: Վաշինգտոնյան հանդիպումների արդյունքում սակայն պարզվեց, որ Հայաստանը կարող է ստանալ առավելագույնը միայն 100-120 մլն դոլարի դրամաշնորհ, այն էլ այն դեպքում եթե հստակ հիմնավորվեն թե ինչպես են այդ գումարները նպաստելու տնտեսական աճին: Այդպես էլ պարզ չեղավ, թե մեր կառավարությունն ի՞նչ հույսերով էր նման հսկայական գումարի պահանջ ներկայացրել ԱՄՆ կառավարությանը:

## Արտարժութային շուկա

Ամբողջ նոյեմբեր-դեկտեմբեր ամսին շարունակվում էր դոլարի նկատմամբ դրամի փոխարժեքի աճը: Բայց ի տարբերություն այս տարվա մարտ-օգոստոսի, այս անգամ դա պայմանավորված էր ոչ միայն դրամի ուժեղացմամբ, այլ համաշխարհային շուկայում դոլարի շարունակվող գահավիժմամբ: Վերջին երեք տարիների ընթացքում դոլարը մյուս խոշոր արժույթների նկատմամբ արժեզրկվել է 30-ից 40 տոկոսով, որը չնայած կարճաժամկետ օգուտներ է բերում ԱՄՆ-ին, քանի որ փոքրացնում է իր պետական պարտքը, բայց զգալիորեն վտանգում է համաշխարհային տնտեսության կայունությանը:

ՁԱՅՆ

**Հիմնադիր և հրատարակիչ (լրատվական գործունեություն իրականացնող)**
«Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբենյանց 28-2,
Վկայական՝ 03 Ա 065178, տրված՝ 28/06/04

**Թողարկման պատասխանատու**
Ակսել Թևոսյան

**Ծրագրի ղեկավար**
Մուշեղ Թումասյան

**Լուսանկարը**
ԵրՄարի

**Տպաքանակը**
2200 օրինակ
Տարածվում է անվճար:

**Խմբագրության հասցե**
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 48
Հեռ./ֆաքս: (374 1) 234 420,
**www.edrc.am**
**dzayn@edrc.am**

**Ձայնը** հրատարակվում է **«Օքսֆամ»** ՄԲ աջակցությամբ:

Սկիզբը՝ նախորդ էջում

արդեն բավարար չէ, քանի որ տարեցտարի նվազում է գյուղատնտեսական մթերքների վաճառքից ստացվող եկամուտները, ապա գյուղական բնակչության եկամուտների աճի միակ հնարավորությունը մնում է ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի բացումը: Ցավոք սրտի այս ոլորտում ևս վերջին տարիներին գյուղում դրական զարգացումներ չկան: Վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 1999-2003 թվականների ընթացքում Հայաստանում բացված նոր աշխատատեղերի 10 տոկոսից քիչ մասն է բաժին հասնում գյուղական բնակավայրերին, այն դեպքում, երբ գյուղական բնակավայրերում բնակվում է Հայաստանի բնակչության մոտ 40 տոկոսը:



## Դրսից ստացվող օգնությունը և պետական նպաստները որպես գոյատևման միջոց

Գյուղատնտեսական եկամուտների անկմանը զուգընթաց, ինչպես և սպասվում էր, մեծացել է գյուղից արտահոսքը դեպի քաղաքներ և արտասահման: Դրա արդյունքում վերջին տարիներին որոշակիորեն աճել են հարազատների կողմից դեպի գյուղ ուղարկվող դրամական օգնությունները: Բացի այդ, վերջին տարիներին կառավարությունը փոխել է աղքատության նպաստների վճարման կարգը շեշտը դնելով բազմազավակության և բնակավայրի դիրքի վրա, որի արդյունքում մեծացել են դեպի գյուղ հոսող պետական օգնության ծավալները: Այս երկու գործոնները միասին որոշ չափով, բայց իհարկե ոչ ամբողջովին, փոխհատուցել են գյուղացիների եկամուտների անկումը: Առանց դրանց գյուղում վիճակն էլ ավելի կվատթարանար:

## Ի՞նչ է մնում անել գյուղացուն

Ակնհայտ է, որ աճող արտադրական ծախսերի, արտաքին և ներքին մրցակցության սաստկացման պայմաններում գյուղացիների համար ավելի ու ավելի է դժվարանալու ապահովել իրենց ապրուստի միջոցները իրենց կողմից տնօրինվող հողակտորների միջոցով: Պատահական չէ, որ գյուղական բնակավայրերից արտագաղթը գերազանցում է քաղաքային բնակավայրերից արտագաղթին: Եթե գյուղացիներն իրենց ապագան կապում են հողակտորների մշակման հետ ապա մնում է միայն մեկ լուծում՝ բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, կամ այլ խոսքերով ասած, մեկ աշխատողի հաշվով ավելի շատ ապրանք թողարկել: Դրա հնարավորությունները ներկայում բավականին սահմանափակ են, քանի որ գյուղացիների կողմից տնօրինվող հողակտորների փոքրության արդյունքում հնարավոր չէ զգալիորեն բարելավել գյուղատնտեսական մթերքների արտադրության պայմանները:

## Կոոպերացիա թե՞ հողերի կենտրոնացում մեկի ձեռքում

Ակնհայտ է, որ գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացման միակ տարբերակը հողերի մեծացման միջոցով տնտեսության վարման ավելի արդյունավետ ձևերի կիրառումն է: Իսկ հողերի մեծացման երկու հնարավորություն կա. առաջինը՝ մանր հողատերերի փոխադարձ շահերի և վստահության վրա հիմնված գյուղատնտեսական կոոպերացիա, և երկրորդ՝ փոքր թվով հարուստների կողմից հողատարածքների ձեռք բերում և խոշոր տնտեսությունների ստեղծում: Այս երկու ուղղությունների դեպքում էլ կմեծանա հողերի մշակման արդյունավետությունը, կբարձրանա բերքատվությունը և միավոր հողից ստացվող եկամուտը: Բայց եթե հարցին նայենք եկամուտների բաշխման տեսանկյունից, ապա այս երկու տարբերակները խիստ տարբեր են. կոոպերացիայի դեպքում հողից ստացվող շահույթը կբաժանվի գյուղացիների միջև, իսկ մեկի ձեռքում տվյալ տարածքի հողերի կենտրոնացման դեպքում հողից շահույթը կկենտրոնանա մեկի ձեռքում: Այսօր գյուղացիական կոոպերացիաների առաջացմանը խանգարում է նաև այն, որ շատերն այդ կոոպերացիաները թյուրիմացաբար նույնացնում են խորհրդային տարիների կոլեկտիվ տնտեսությունների հետ: Գյուղացիների ապագան կախված է այն բանից, թե կկարողանան արդյո՞ք իրենք գալ փոխադարձ համաձայնության և համագործակցել իրար հետ, թե՞ պետք է մեկ առ մեկ վաճառեն իրենց հողերի մեծ մասը ապագայում դառնալով հողազուրկ գյուղացիներ կամ տեղափոխվեն Երևան և ունենան անորոշ ապագա:

## Արդյո՞ք ավարտվել է հողերի վերաբաշխումը

Այսօր դեռևս շատ չէ հողերի վաճառքի թիվը և կարելի է ասել, որ հողերի կենտրոնացում փոքր թվով մարդկանց ձեռքում կարծես թե տեղի չի ունենում: Բայց իրականում հողերի վերաբաշխումը չի ավարտվել սեփականաշնորհումով և չի սահմանափակվում ներկայում իրականացվող փոքր թվով գործարքներով: Կա նաև երևույթի ոչ այնքան լուսաբանվող մասը: Դա կապված է այսպես կոչված դեռևս չսեփականաշնորհված և դեռևս պետական սեփականության տակ գտնվող հողերի նախատեսվող սեփականաշնորհման հետ: Այս երևույթը կարող է հանգեցնել Հայաստանում գյուղատնտեսական հողերի լայնածավալ վերաբաշխման և, հնարավոր է նաև, քիչ թվով մարդկանց ձեռքում հողերի համակենտրոնացման: Խնդիրը կայանում է նրանում, որ 1991-1993 թվականի հողերի անհայտույց սեփականաշնորհման ժամանակ գյուղացիներին տրվել է Հայաստանի ամբողջ գյուղատնտեսական հողային ֆոնդի մոտ 30 տոկոսը միայն: Մնացած հողերը, որոնք կազմում են հիմնականում քիչ կարևորության հողեր (արոտավայրեր, չոռոգվող հողեր) մինչև հիմա գտնվել են պետության ձեռքերում, որը ներկայում դա փոխանցում է գյուղական համայնքներին հետագայում դրանք աճուրդային կարգով վաճառելու նպատակով:

Այստեղ ամբողջ հարցը կայանում է նրանում, որ այդ հողերի մեջ կան այնպիսի հողատարածքներ, որոնց վրա որոշակի ներդրումներ կատարելուց հետո այդ հողերը ոչ մի բանով չեն զիջում մինչ այժմ սեփականաշնորհված հողերին և պիտանի կլինեն գյուղատնտեսության համար: Արդեն կան դեպքեր, երբ համայնքների ֆոնդից գնվել են ոչ պիտանի համարվող խոշոր հողակտորներ, որոնց վրա, որոշակի ներդրումներ կատարելուց հետո, ծավալվել է խիստ արդյունավետ գյուղատնտեսություն: Իհարկե, լավ է, որ նախկինում անմշակ հողերը կարող են դառնալ մշակովի: Բայց մտավախությունն այն է, որ այդ հողատարածքները պետության կողմից ներկայումս վաճառվում են մեծ կտորներով, որի արդյունքում մենք շուտով կունենանք երկու տիպի գյուղատնտեսություն՝ մեկը մանր գյուղացիական տնտեսություններ յուրաքանչյուրը մոտ 1 հեկտար հողով, և խոշոր հողասեփականատերեր՝ 20-ից 500 և ավել հեկտար հողակտորներով: Եվ եթե այդ խոշոր հողակտորները բոլորը միասին լինեն բոլոր մանր գյուղացիական տնտեսությունների ընդհանուր տարածքի 1/3-ը կամ նույնիսկ 1/4–ը միայն, դրանք կարող են շուկա մատակարարել ավելի շատ գյուղատնտեսական մթերքներ, քան բոլոր մանր գյողացիական տնտեսությունները միասին վերցրած, քանի որ իրենց աշխատանքի արդյունավետությունը կլինի շատ ավելի բարձր, քան մանր գյուղատնտեսներինը:

Այդ պայմաններում կարելի է ակնկալել, որ մանր գյուղացիները կարող են դուրս մղվել գյուղատնտեսական մեթերքների շուկայից ավելի վատացնելով գյուղական բնակչության տնտեսական պայմանները: Դա կանխարգելու համար խիստ անհրաժեշտ է ներկայում սեփականաշնորհվող հողերը հանել վաճառքի փոքր հողակտորներով, որպեսզի մանր գյուղացիները ևս ունենան հնարավորություն մասնակցելու սեփականաշնորհմանը և, գնելով նոր հողակտորներ, բարձրացնեն իրենց աշխատանքի արդյունավետությունը:

## Ոչ գյուղատնտեսական աշխատատեղերը, որպես հարցի հիմնական լուծում

Եթե նույնիսկ Հայաստանում հրաշք տեղի ունենա և մեր գյուղացիները համագործակցեն միմյանց հետ և ստեղծվեն բազմաթիվ գյուղատնտեսական կոոպերատիվներ, որի արդյունքում բարձրանա բերքատվությունը և մեծանան գյուղական եկամուտները, ապա նույնիսկ այդ դեպքում գյուղացիական բնակավայրերում աղքատությունը չի վերանա: Ըստ տարբեր գնահատականների այսօրվա գյուղատնտեսության համար անհրաժեշտ են ոչ թե 500 հազար աշխատողներ, այլ մոտ 250 հազար աշխատողներ: Այսինքն այսօր գյուղում կա հսկայական ավելցուկային աշխատուժ, որի զբաղվածությունը ապահովելու լուծումները պետք է փնտրել ոչ գյուղատնտեսական ոլորտում: Առանց ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծման Հայաստանի գյուղական բնակավայրերը կունենան խիստ թերբեռնված և անարդյունավետ օգտագործվող աշխատուժ, որը կհանգեցնի գյուղական աղքատության ավելի ու ավելի խորացմանը: